ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» 08 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 496-Հ

«ՎԻԶ ԷՅՐ ՀԱՆԳՐԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 227-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ էյր Հանգրի» ավիաընկերության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Վիեննա/LOWW/-Երևան/UDYZ/-Վիեննա/LOWW/ երթուղով՝ 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և Վիլնյուս/EYVI/-Երևան/UDYZ/-Վիլնյուս/EYVI/ երթուղով՝ 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Վիլնյուս/EYVI/-Երևան/UDYZ/-Վիլնյուս/EYVI/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ սույն կետում նշված Երևան/UDYZ/-Վիլնյուս/EYVI/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 36 ամսով: Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

3. Հաշվի առնելով, որ Ընկերությունը չի իրականացրել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 227-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում որևէ չվերթ՝ Հրամանի 2-րդ և 3-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվությունների տեղադրումը քաղաքացիական ավիացիայի Կոմիտեի կայքում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Revoked certificate

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«14» 01 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 14-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 496-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին պարբերության «զ» կետի 2-րդ պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածի պահանջները և հաշվի առնելով, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 496-Ա հրամանով «Վիզ էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ավիաընկերություն) 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ն ընկած ժամանակահատվածի համար Վիլնյուս(EYVI)-Երևան(UDYZ)-Վիլնյուս(EYVI) երթուղով տրված թույլտվության հիման վրա Ավիաընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային առաջին փոխադրումն իրականացվել է 2021 թվականի դեկտեմբերի 19-ին.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի «Վիզ էյր Հանգրի» ավիաընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի

ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ և «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնություն տալու և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 227-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 496-Ա հրամանի 2-րդ կետի «արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 36 ամսով» բառերը փոխարինել «արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 19-ը՝ 36 ամսով» բառերով:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

3. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի վերաբերյալ տեղեկացումը Ավիաընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1/14/2022

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 138/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 138/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Վիզ էյր Հանգրի» ՍՊԸ "Wizz Air Hungary" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239)
Հաճախականությունը Frequency	Շաբաթական 2 չվերթ 2 flights per week
Երթուղին Air route	Վիլնյուս/EYVI/-Երևան/UDYZ/-Վիլնյուս/EYVI/ Vilnius/EYVI/-Yerevan/UDYZ/-Vilnius/EYVI/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	31/10/2021 մինչև 23/03/2022 31/10/2021 till 23/03/2022

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF
CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

9/29/2021

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

29.09.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)